

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Մայիսի 1-ի կապակցությամբ
01.05.2023

Սիրելի՛ հայրենակիցներ,

Սրտանց շնորհավորում եմ ձեզ Աշխատանքի օրվա՝ Մայիսի 1-ի կապակցությամբ: Մենք լավ գիտենք աշխատանքի գինը, քանի որ դարեր շարունակ սեփական ձեռքերով ենք կառուցել մեր տունը, շենացրել հայրենի հողն ու կերտել մեր ապագան:

Այս տոնը կոչված է փառաբանելու և մեծարելու աշխատավորին, նրա արարումն ու աշխատանքը:

Թե՛ մեր երկրի ներսում, թե՛ դրա սահմաններից դուրս հայ աշխատավորը մշտապես աչքի է ընկել իր ստեղծագործ մտքով և արարող ձեռքով: Այսօր մենք մեր բոլոր ջանքերը պետք է ներդնենք երկրում արժանապատիվ աշխատանքի, արժանապատիվ վաստակի հնարավորությունները մեծացնելու և մեր ժողովրդի բարօրությունն ապահովելու համար:

Աշխատանքի արժևորումը՝ սոցիալական կյանքի պայմանների ստեղծումն ու մեր քաղաքացիների լիարժեք զբաղվածությունը պետք է լինեն սոցիալական և տնտեսական քաղաքականության հիմնական առանցքը:

Ցանկանում եմ, որ բոլորդ հնարավորություն ունենաք աշխատանքի միջոցով, աշխատանքի շնորհիվ իրացնելու ձեր ֆիզիկական, մտավոր ու հոգևոր հմտությունն ու ներուժը, գիտելիքը, փորձն ու երևակայությունը:

Կրկին շնորհավորում եմ ձեզ Աշխատանքի օրվա առթիվ: Մաղթում եմ բոլորիս խաղաղ ու ստեղծագործ աշխատանք՝ հանուն մեր ընտանիքների բարեկեցության և մեր երկրի անխափան զարգացման, հանուն մեր հավաքական երազանքների, մեր պետականության և մեր ապագայի: